ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

17 մայիսի 2016 թվականի **թիվ 43** քաղ. Մոսկվա

Կամավոր հիմունքով կիրառման արդյունքում «Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 009/2011) պահանջների պահպանումն ապահովող միջպետական ստանդարտների, ինչպես նա եւ «Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջները (ՄՄ ՏԿ 009/2011) կիրառելու եւ կատարելու եւ տեխնիկական կարգավորման օբյեկտների համապատասխանության գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ պարունակող միջազգային ստանդարտների մշակման (փոփոխությունների կատարման, վերանայման) ծրագրում փոփոխություններ կատարելու մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29–ի պայմանագրի 51-րդ հոդվածի 1-ին կետի 11-րդ եւ 12-րդ ենթակետերով

նախատեսված սկզբունքների իրագործման նպատակով, եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 2 հավելվածի 7-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 237 որոշմամբ հաստատված կամավոր հիմունքով կիրառման արդյունքում «Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 009/2011) պահանջների պահպանումն ապահովող միջպետական ստանդարտների, ինչպես նա եւ «Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջները (ՄՄ ՏԿ 009/2011) կիրառելու եւ կատարելու եւ տեխնիկական կարգավորման օբյեկտների համապատասխանության գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ պարունակող միջազգային ստանդարտների մշակման (փոփոխությունների կատարման, վերանայման) ծրագրում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի մայիսի 17-ի
թիվ 43 որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

կամավոր հիմունքով կիրառման արդյունքում «Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 009/2011) պահանջների պահպանումն ապահովող միջպետական ստանդարտների, ինչպես նա եւ «Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (ՄՄ ՏԿ 009/2011) կիրառելու եւ կատարելու եւ արտադրանքի համապատասխանության գնահատում (հավաստում) իրականացնելու համար անհրաժեշտ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ պարունակող միջազգային ստանդարտների մշակման (փոփոխությունների կատարման, վերանայման) ծրագրում կատարվող

1. 35-րդ դիրքը հանել:
2. Լրացնել հետ եւյալ բովանդակությամբ 41^{35} - 41^{50} դիրքերով՝

« 41[35]	71.100.70	Արտադրանք՝ օծանելիքակոսմետիկական։ Միկրոկենսաբանական նորմեր։ ԳՕՍՏ ստանդարտի մշակումը ԻՍՕ 17516:2014-ի հիման վրա	5-րդ հոդվածի 4-րդ կետ	2015 թվական	2016 թվական	Բելառուսի Հանրապետություն
41[36]	71.100.70	Արտադրանք՝ օծանելիքակոսմետիկական, հեղուկ։ Փաթեթավորում, մակնշում, տրանսպորտային փոխադրում եւ պահպանում։ ԳՕՍՏ 27429-87-ի վերանայում	5-րդ հոդվածի 8-րդ եւ 9-րդ կետեր	2015 թվական	2016 թվական	Բելառուսի Հանրապետություն
41[37]	71.100.70	Արտադրանք՝ օծանելիքակոսմետիկական։ Փաթեթավորում, մակնշում, տրանսպորտային փոխադրում եւ պահպանում։ ԳՕՍՏ 28303-89-ի վերանայում	5-րդ հոդվածի 8-րդ եւ 9-րդ կետեր	2016 թվական	2017 թվական	Բելառուսի Հանրապետություն
41[38]	71.100.70	Կրեմներ՝ կոսմետիկական։ Ընդհանուր տեխնիկական պայմաններ։ ԳՕՍՏ 31460-2012-ում փոփոխություններ կատարելը	5-րդ հոդվածի 3-6-րդ կետեր	2018 թվական	2019 թվական	Ռուսաստանի Դաշնություն
41[39]	71.100.70	Դեկորատիվ կոսմետիկայի արտադրանք՝ յուղամոմային հիմքով։ Ընդհանուր տեխնիկական պայմաններ։ ԳՕՍՏ 31649-2012-ում փոփոխություններ կատարելը	5-րդ հոդվածի 3-6-րդ կետեր	2018 թվական	2019 թվական	Ռուսաստանի Դաշնություն
41[40]	71.100.70	Արտադրանք՝ օծանելիքակոսմետիկական, աերոզոլային փաթեթվածքով։ Ընդհանուր տեխնիկական պայմաններ։ ԳՕՍՏ 31677-2012-ում փոփոխություններ կատարելը	5-րդ հոդվածի 3-6-րդ կետեր	2018 թվական	2019 թվական	Ռուսաստանի Դաշնություն

41[41]	71.100.70	Արտադրանք՝ օծանելիքային, հեղուկ: Ընդհանուր տեխնիկական պայմաններ: ԳOUS 31678-2012-ում փոփոխություններ կատարելը	5-րդ հոդվածի 3-6-րդ կետեր	2018 թվական	2019 թվական	Ռուսաստանի Դաշնություն
41[42]	71.100.70	Արտադրանք՝ կոսմետիկական, հեղուկ: Ընդհանուր տեխնիկական պայմաններ: ԳOUS 31679-2012-ում փոփոխություններ կատարելը	5-րդ հոդվածի 3-6-րդ կետեր	2018 թվական	2019 թվական	Ռուսաստանի Դաշնություն
41[43]	71.100.70	Արտադրանք՝ կոսմետիկական, սափրվելու համար: Ընդհանուր տեխնիկական պայմաններ: ԳOUS 31692-2012-ում փոփոխություններ կատարելը	5-րդ հոդվածի 3-6-րդ կետեր	2018 թվական	2019 թվական	Ռուսաստանի Դաշնություն
41[44]	71.100.70	Արտադրանք՝ կոսմետիկական, եղունգների խնամքի համար: Ընդհանուր տեխնիկական պայմաններ: ԳOUS 31693-2012-ում փոփոխություններ կատարելը	5-րդ հոդվածի 3-6-րդ կետեր	2018 թվական	2019 թվական	Ռուսաստանի Դաշնություն
41[45]	71.100.70	Գելեր՝ կոսմետիկական: Ընդհանուր տեխնիկական պայմաններ: ԳOUS 31695-2012-ում փոփոխություններ կատարելը	5-րդ հոդվածի 3-6-րդ կետեր	2018 թվական	2019 թվական	Ռուսաստանի Դաշնություն
41[46]	71.100.70	Արտադրանք՝ կոսմետիկական, հիգիենիկ, լվացող: Ընդհանուր տեխնիկական պայմաններ: ԳOUS 31696-2012-ում փոփոխություններ կատարելը	5-րդ հոդվածի 3-6-րդ կետեր	2018 թվական	2019 թվական	Ռուսաստանի Դաշնություն
41[47]	71.100.70	Դեկորատիվ կոսմետիկայի արտադրանք՝ էմուլսիայի հիմքով: Ընդհանուր տեխնիկական պայմաններ: ԳOUS 31697-2013 փոփոխություններ կատարելը	5-րդ հոդվածի 3-6-րդ կետեր	2018 թվական	2019 թվական	Ռուսաստանի Դաշնություն
41[48]	71.100.70	Արտադրանք՝ կոսմետիկական, փոշենման եւ խիտ: Ընդհանուր տեխնիկական պայմաններ: ԳOUS 31698-2013-ում փոփոխություններ կատարելը	5-րդ հոդվածի 3-6-րդ կետեր	2018 թվական	2019 թվական	Ռուսաստանի Դաշնություն

41[49]	71.100.70	Արտադրանք՝ օծանելիքակոսմետիկական։ Տեղեկություններ սպառողի համար։ Ընդհանուր պահանջներ։ ԳՕՍՏ 32117-2012-ում փոփոխություններ կատարելը	5-րդ հոդվածի 9-րդ կետ	2018 թվական	2019 թվական	Ռուսաստանի Դաշնություն
41[50]	71.100.70	Ալերգենների անալիզի մեթոդներ։ Սպառողական ապրանքներում հոտավորիչներին առնչվող ենթադրյալ ալերգենների քանակի որոշում։ Փուլ 1. Նախապատրաստված փորձանմուշի գազաքրոմատագրական անալիզ։ ԳՕՍՏ ստանդարտի մշակումը EN 16274:2012-ի հիման վրա	5-րդ հոդվածի 2-րդ եւ 9-րդ կետեր	2016 թվական	2017 թվական	Բելառուսի Հանրապետություն

»

3. 42-րդ եւ 43-րդ դիրքերի 5-րդ սյունակում «2013» թվերը փոխարինել «2016» թվերով, 6-րդ սյունակում «2014» թվերը փոխարինել «2017» թվերով, 7-րդ սյունակում «Ռուսաստանի Դաշնություն» բառերը փոխարինել «Բելառուսի Հանրապետություն» բառերով։

4. Լրացնել հետեւյալ բովանդակությամբ 46-րդ դիրքով՝

«

46	71.100.70	Արտադրանք՝ օծանելիքակոսմետիկական։ Միջոցներ՝ ատամների սպիտակեցման համար։ ԳՕՍՏ ստանդարտի մշակումը ISO 28399:2011-ի հիման վրա	5-րդ հոդվածի 3-6-րդ, 8-րդ եւ 9-րդ կետեր	2016 թվական	2017 թվական	Բելառուսի Հանրապետություն

»